ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԻԶ (ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Արմինե Ալավերդյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2025 թվականի հոկտեմբերի 28-ից - 31-ը

3. **Հրավիրող կողմը.**

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

4. **Գործուղման նպատակը.**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Արևելյան գործընկերության տարածաշրջանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և գենդերային հավասարության ապահովման քաղաքականության, դրանց իրականացման մոնիթորինգի և հիմնական մարտահրավերների վերաբերյալ» տարածաշրջանային քննարկմանը:

5. **Քննարկված թեմաները.**

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին՝

- Կրթության, զբաղվածության և ձեռներեցության ոլորտում գենդերային հավասարության վերաբերյալ 2013 թվականի Տնտեսական

համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ուղեցույցները,

- Հասարակական կյանքում գենդերային հավասարության վերաբերյալ 2015 թվականի ՏՀԶԿ ուղեցույցները, այդ թվում՝ «Գենդերային հավասարության ներդրման և իրականացման գործիքակազմը»,

- Արևելյան գործընկերության շրջանակներում գենդերային հավասարության սկզբունքների ներդրումը՝ լավագույն փորձ, տեսանելի օրինակներ և հիմնական մարտահրավերներ: Գենդերային հավասարության հասնելու հնարավորությունների դիտարկումը պետական կառավարման սկզբունքների տեսանկյունից,

- ԵՄ անդամ պետությունների փորձը. գենդերային հավասարության ապահովման նախաձեռնությունները Ֆրանսիայի պետական կառավարման համակարգում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տարածաշրջանային քննարկման առաջին օրը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության Արևելյան գործընկերության պետական կառավարման բարեփոխումների (EaP PAR) ծրագրի շրջանակներում և ՏՀԶԿ SIGMA ծրագրի հետ համագործակցությամբ անդրադարձ կատարվեց Արևելյան գործընկերության (EaP) տարածաշրջանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և գենդերային հավասարության ապահովման քաղաքականությանը, դրանց իրականացման մոնիթորինգին և հիմնական մարտահրավերներին: Քննարկվեցին Արևելյան գործընկերության երկրների պետական կառավարման մարմիններում գենդերային հավասարությունը խթանելու հետ կապված հարցերը, որոնք պետք է հասցեագրվեն սերտորեն

համագործակցելով այս ոլորտում քաղաքականության մշակման համար պատասխանատու կառույցների հետ:

Քննարկման երկրորդ օրը կայացավ հիմնական աշխատանքային նիստը, որի ընթացքում Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի մասնակիցները, պետական կառավարման ոլորտում գենդերային անհավասարությունները վերափոխող մոտեցումների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու նպատակով իրականացրեցին Արևելյան գործընկերության երկրներում գենդերային հավասարության շրջանակի SWOT վերլուծություն:

Միջոցառման ընթացքում անդրադարձ եմ կատարել հետևյալ թեմաներին՝

- ✓ ՀՀ-ում գենդերային հավասարության քաղաքականության իրականցման ազգային մեխանիզմը՝ ՀՀ փոխվարչապետին կից Կանանց հարցերով խորհուրդ և աշխատանքային խումբ, մարզային մակարդակում Մարզպետին կից Գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովներ և համայքային մակարդակում Կանանց և երիտասարդների հարցերով զբաղվող խորհրդակցական մարմիններ,

- ✓ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններն ու դրանցից բխող նոր կարգավորումների կարևորությունը,

- ✓ ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը՝ գերակա ուղղությունները, ակնկալվող արդյունքը և նախատեսվող միջոցառումները,

- ✓ ԱՄԿ 190 կոնվենցիայի վավերացումը՝ որպես աշխատավայրում կանանց նկատմամբ բռնության և ոտնձգության կանխարգելման առանցքային բաղադրիչ,

- ✓ 2025-2031 թթ. Զբաղվածության ռազմավարությունը՝ կանանց կայուն զբաղվածության և աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումներն ու Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը,

- ✓ ՀՀ-ում Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ռազմավարությունը կանանց համար բարենպաստ, հավասար և ներառական միջավայրի ապահովման համատեքստում,

- ✓ ՀՀ-ում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծառայությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառման ընթացքում հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել տարբեր միջազգային փորձագետների հետ՝ առաջարկել եմ քննարկել համագործակցության հնարավորությունն Արևելյան գործընկերության իդեքսի շրջանակում ՀՀ-ի դիրքերի բարելավման ուղղությամբ՝ երկրում գենդերային հավասարության ապահովմանը միտված քաղաքականությունների իրականցման բաղադրիչի միջոցով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

05.11.2025 թ